ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 4 հունվարի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց Եվրախորհրդի նախարարների կոմիտեի պատվիրակությանը՝ կոմիտեի նախագահ, Լատվիայի ԱԳ նախարար Ինդուլիզ Բերզինշի գլխավորությամբ:

Ողջունելով հյուրերին, Նորին Սրբությունը մաղթեց, որ նոր հազարամյակը լինի խաղաղության և ազգերի ու պետությունների միջև համագործակցության գեղեցիկ մի ժամանակաշրջան: Վեհափառ Հայրապետը ուրախությամբ նշեց, որ նոր դարասկիզբը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի համար նշանավորվում է Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման 1700-ամյա հոբելյանական տարեդարձով:

Հանդիպման ընթացքում խոսվեց Եվրախորհրդին Հայաստանի անդամակցության հարցի մասին, որի քննարկումը Եվրախորհրդում տեղի է ունենալու հունվար ամսին: «*Հավատում ենք, որ Հայաստանի ընդգրկումը Եվրախորհրդին պիտի նպաստի երկրում ժողովրդավարական սկզբունքների զարգացմանը*»,- ասաց Նորին Սրբությունը՝ նշելով, որ եղբայրական համագործակցության պայմաններում Հայաստանը հաստատաքայլ կընթանա առաջընթացի ուղիով: Նորին Սրբությունը նշեց, որ հարցի դրական լուծումը իր նպաստը կբերի նաև տարածաշրջանում կայունության ապահովմանը:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաև Հայ Եկեղեցու ներկա կացությանը, 1700-ամյա հոբելյանական միջոցառումներին:

ՀԱՅԿ ԳՐԱԴԱՐԱՆ